


ԲՈԲԿԱՅԻ ՈՐԸ

Վ. ԵՍՄԱՆՈՒԵԼ

ՆԿԱՐՆԵՐԸ

ՍԵՍԻԼ

ՈԼԴԻՆԻ



ԹԵՏՐԱՑ

1936

ՅԵՐԵՎԱՆ

82 Տ.
5-44

19 NOV 2011

8215

5-44

ԱՐ.

Վ. ԵՄԵԱՆՈՒԵԼ

Բ Ո Բ Կ Ա Յ Ի Ո Ռ Ը

1089
39074

4074

Ն կ ա ր ն ե ր ը
Ս ե ս ի լ ո ւ դ ր ն ի

Թումեր. բարգմանեց
Հ. Տ. Ա Վ Ա Գ Ց Ա Ն

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1936



15.04.2013

616

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲՈԲԿԱՅԻ ՈՐԸ


ԻՆՉ ԿՊԱՏՄԵՐ ՇՆԻԿԸ, ՅԵԹԵ ԿԱՐՈՂԱ-
ՆԱՐ ԻՌՍԵԼ ՈՒ ԳՐԵԼ

Առավոս,
8 Ժամը

Արթնացա բարկացած՝ — չմողեցին մի լավ
քնեյի։ Կես գիշերին ինչ վոր մի մարդ կամա-
ցուկ մտավ խոհանոց լուսամուտից։ Ինչու դըռ-
նձվ չեկավ։ Յես ուզում եյի հաջել, բայց նա
մի լավ կտոր միս գցեց ինձ։ Քանի վոր յես
հյուրասիրվում եյի, մարդը հավաքեց մի կույտ
գլաւ, պատառաքաղ, դանակ և դրեց տոպրա-
կի մեջ։

Յերբ պատրաստվում եր գնալ, այդ ան-
քաղաքավարին վոտքը կոխեց պոչիս վրա։ Յես
վոռնացի ցավից և բերանս գցեցի նրա վոտ-
քին։ Այդ վախկոտը տոպրակը գցեց ու փա-
խավ, — ելի խոհանոցի լուսամուտով։

Իմ հաջոցը բոլոր տնեցիներին արթնա-
ցրեց։ Տանտերս ու տանտիրուհիս վազեցին
յեկան խոհանոց և խոկույն նկատեցին տոպրա-
կը լիքն իրերով։ Բանից դուրս յեկավ, վոր յես
գող եմ փախցրել։ Այդ դեպքի շնորհիվ ինձ
անվանում եյին հերոս, գրկում եյին, փաղաք-
շում անվերջ։



Առավոտը շուտ յեկան տանտիրոջ յերեխաներն ու զզիս կապեցին մի կարմիր ժապավեն։ Զարդարեցին ինձ խրավիլակի նման։ Դե, ինքներդ ասացեք, ինչ լավ բան կա այդ ժապավենների մեջ։ Աշխարհումս ժապավեններից ավելի վատ բան չկա։



8ձ. 30 ր. Դժվարությամբ եմ նախաճաշում, ախոր-
ժակ չկա:


8 Ժ. 35 ր. Կերա կատվի ձագերի նախաճաշը:

8 Ժ. 36 ր. Կովեցինք կատվի հետ (ձագերի մոլ):
Զզվելին այնպես ե շանգոռում: Բոլորովին չար-
ժի նրա հետ կովել:



9 Ժամը


Տանտիկինը լողացնում ե ինձ: Ինչ մի
լավ բան ե վոր: Դնում են քեղ տաշտի մեջ,
ջուրը լցնում վրադ ու սկսում են սապնել
գլխից մինչև պոշը: Կատուն նայում եր ինձ և
նենգորեն քմծիծաղ տալիս: Թող ծիծաղի: Նա
ստիպված ե ինքն իրեն լողացնելու, իսկ ինձ
համար ամեն ինչ տան տերերն են անում:
Բայց, ճիշտն ասած, շատ ավելի լավ ե, յերբ
դու սև ես՝ ավելի քիչ ես կեղտոտվում: Թե չե
ամեն անգամ ինձ մատ կպցնելիս, ճետքերը
մնում են իմ սպիտակ բրդի վրա: Ավելի զար-
մանալի տեսք եմ ունենում յերբ դռնապանը
ավելով մի լավ հասցնում ե ինձ: Դե, հո՛ չի
կարելի լողանալ որեկան տաս անգամ:



9 ձ. 20 ր. Ահա և յես լողացաւ: Բնդհանուր ցնծություն: Ինձ փաղաքշում են և անվանում՝ —սիրելի, թանկագին, մաքուր, քաջ շնիկ:

9 ձ. 30 ր. Հենց վոր բաց արին մուտքի դուռը, յես դուրս թռա փողոց և մի լավ թափալվեցի փոշու ու ցեխերի մեջ: Յերբ յես վերադարձաւուն, բոլորը շշմած նայեցին ինձ:

Այս անգամ ինձ ներեցին՝ դե, յես, ինչքան շլինի, հերոս եմ, չե:



9 Ժ. 40 ր.

Յես բարձրացա տատիկի մահճակալին և
սկսեցի թափալել մաքուր անկողնի վրա: Բայց
գիտե՞ք ինչ ոյին հանեց պառավխ իմ գլուխը:
Պարզ ե, ի հարկե—նա ինձ չի սիրում և միշտ
կատվին ե յերես տալիս: Եհ, ինչ ուզում ե
լինի:

Ժ. 10-ից

մինչեւ
10 Ժ. 15 ր

Թափահարում եյի պոչա:



10 Ժ. 18 ր. Յեղա՛խոհանոցում։ Տանտիկնոջ ուշքը վրան
չեր, և յես սեղանի վրայից մի կոտլետ թրո-
ցըրի։

10 Ժ. 20 ր.
մբռչեվ
12 Ժ.

Նիրհում եյի։

12 Ժ. 30 ր. Ճաշում եմ։

12 Ժ. 35 ր. Ուտում եմ կատվի ճագերի ճաշը։

12 Ժ. 40 ր. Ելի ինձ վրա հարձակվեց կատուն։ Անպի-
տանը չանգուեց իմ հետեւի վոտքը։ Յես չու-
զեցի շարունակել կորվը։
Զմռանամ վրեժը ձագերից հանել։


1 Ժամը Ճաշին փոքրիկ Ձեկը ինձ վրա յեր նե-
տում հացի գնդիկները և մի հատ ել խփեց
ուղիղ քթիս։ Յես տարա վիրավորանքը։ Դրա
փոխարեն Պեգզին սեղանի տակ նետեց ինձ
համար մի լավ կտոր կարկանդակ։ Հրաշալի
աղջիկ ե։

1 Ժ. 20 ր. Բախտավոր պատահմունք.—մառանում մի
մեծ ափսե վողողուն ձուկ ընկավ ձեռքս։ Յես
անմիջապես մաքրազարդեցի ափսեն։

1 Ժ. 30 ր. Մարսափելի ցավում ե փորս։

1 Ժ. 32 ր. Փորիս ցավը քանի գնում սաստկանում ե։

1 Ժ. 33 ր. Սոսկալի, անտանելի ցավում ե փորս։
Մեռնում եմ։



1 ձ. 35ր. Մտա տատիկի մահճակալի տակ: Մի քիչ
լավ եմ:

1 ձ. 40 ր. Լավ եմ:

1 ձ. 46 ր. Բոլորովին լավ եմ: Դա զուտ անհանգըս-
տություն եր: Չնայած դրան — յես խորհուրդ
կտայի տանտիկնոջը չթողնել բաց-բաց այդպի-
սի համեղ բաներ:

Նորից յես ինձ զգում եմ շատ առույգ: Մի
քսան անգամ պտույտ գործեցի սենյակի շուր-
ջը: Ցնծությունից չգիտեմ ուր գնամ, ինչ
անեմ: Վերջի վերջո ցատկում եմ տան տի-
րոջ ծնկներին, վորը նիրհում եր բազկաթո-
ոփի մեջ:

Տանտերը վախեցած արթնանում ե և հայ-
նոյում այնպիսի խոսքերով, վոր յես յեր-
բեք նրանից չեցի լսել: Գործերը վատ են գը-
նում: Պիտի պատժեն անպատճառ: Պեզզին
աշխատում ե պաշտպանել ինձ: Բայց տան-
տերը լուրջ բարկացած ե և հրամայում ե աղ-
ջրկան ծեծել ինձ: Շատ լավ ե: Կատարյալ բա-
վականություն ե: Պեզզին չի ծեծում ինձ, այլ
կարծես շոյում ե: Չնայած դրան յես կաղ-
կանձում եմ և ձեացնում, իբր թե ցավում ե:



Ժ. 2-ից
մինչեղ
3 Ժ. 13 ր. Վոչ մի լավ բան դրանում:

3 Ժ. 15 ր.
մինչեղ
3 Ժ. 30 ր.

3 Ժ. 46 ր. Մի ստար տղա ներս մտավ ու քաշեց
պոչից: Յես հարձակվեցի նրա վրա: Ի՞նչ է,
յես հո խաղալիք չեմ:

3 Ժ. 52 ր. Նորից փորձում եյի կրծոտել մորթե գոր-
դիկը:



Ժ. 4-ից
մինչեւ

5 Ժ. 15 ր.

5 Ժ. 15 ր.

5 Ժ. 20 ր.

մինչեւ

5 Ժ. 30 ր.

5 Ժ. 30 ր.

Քնած եյի:

Արթնացա: Յերկար քորում եյի ինձ:

Նորից քնեցի:

Նորից քորում եյի ինձ: Բռնեցի մի լու:



6 Ժամը Յեղա խոհանոցում: Թուցրի մի քանի կը-
տոր վոսկոր:

6 Ժ. 15 ր. Փախցրի կատվի ձագերին:

6 Ժ. 20 ր. Այնքան ուրախ եմ — ոգնեցի մկներին
փախչելու կատվի ձեռքից:



6 Ժ. 25 ր. Բակի խորքերում գտա կոնֆետի մի տուփ:
Լիզեցի: Վնաս չունի:

7 Ժամը Ընթրեցի: Կերա առանց ախորժակի, — չա-
փից դուրս եյի կերել այսոր:

7 Ժ. 15 ր. Ուտում եմ կատվի ձագերի ընթրիքը:
Բայց յես կուզեյի, վոր այդքան հաճախ նը-
րանց ձուկ չտային: Յես կհիվանդանամ դրա-
նից:

7 Ժ. 25 ր. Շատ վատ եմ զգում ինձ: Վոչինչ չեմ
կարողանում անել: Հենց այդպես ել կուզեյի
պառկել վառարանի մոտ: Ինձ թվում ե, վոր
յես ել առաջվա բորկան չեմ:

8 Ժամը Ուռա: Ախորժակս լավանում ե:

8 Ժ. 1 ր. Գայլի ախորժակ ունեմ:

8 Ժ. 6 ր. Հոտոտում եմ խոհանոցի հատակը: Վերցըի
մի ածուխի կտոր, մի կտոր սխտոր, հին սանր,
չորացած հացի մի կտոր և կես մետրի չափ
ամուր պարան: Ածուխից հետո ինձ, նույնիսկ
պարանը դուր ե գալիս:

8 Ժ. 40 ր. Բավական ե վոր հույսդ դրիբ ուրիշների
վրա՝ կարելի յե սատկել քաղցից: Բարեբախտա-
բար յես գտնում եմ ճաշարանում բրնձի պո-
դինք: Լիզում եմ բալի ոշարակը, մնացածը թող-
նում եմ հյուրերին:



8 Ժ. 45 ր. Գնում եմ խոհանոց։ Նստած եմ վառարանի
մոտ և ձեացնում եմ, իբր թե չգիտեմ թե
ինչ ե բալի ոշարակը։ Բայց գարշելի կատուն
այդտեղ ե, և ինձ թվում ե, գլխի յե ընկնում
ամեն բան։ Ինչ իրավունք ունի նա նայելու
ինձ այդպիսի նենգությամբ, Այ թե ինչ սու-
սիկն ե։ Ինչ լավ կլինի նրան մի դաս տամ։
Յես գաղտագողի մոտենում եմ հետևից և փոր-
ձում եմ կծել նրան։ Բայց նա հարձակվում ե
ինձ վրա և արյունլվա անում իմ թաթը։ Յես
վոռնում եմ ցավից,


8 Ժ. 50 ր. Ինձ մոտ ե վազում Պեղպին (նա արդեն
պառկում եր քնելու), շոյում ե ինձ, ասում ե
կատվին, վոր նա զզվելի չարն ե, տալիս ե ինձ
մի կտոր շաքար և դնում ե վիրավորված թա-
թիս վրա հացի փափուկից շինած մի թրջոց։
Ինչքան ե սիրում ինձ այդ աղջիկը։

Ուտում եմ թրջոցը։



9 ժ. 5 ր.
9 ժ. 8 ր.
9 ժ. 10 ր.

Սկսում եմ նիրհել:
Նիրհում եմ:
Պառկում եմ փողցի վրա: Լույսը հանգ-
ցը բած եք:
Այ թե ինչ որ եր:



Խմբագիր՝ Ա. Հայրյան, աելու.
Խմբագիր և լիտոնկարիչ Սերոբ
Գառպարյան, սրբագրիչ՝ Հ. Մա-
նուկյան, դրախտը՝ Ա. Սայազյան։
Դրավիճակ՝ լիազոր 291, պատկեր
1804, հրատ. 3535, աիրաժ 5000
Գետհրատի տպարան։



«Ազգային գրադարան»



NL0388983

616



В. ЭМАНУЭЛЬ
БОБКИН ДЕНЬ
ГИЗ ССРА, Эривань, 1936